



**«ԱՌԻԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Բովանդակություն

- 3 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
- 4 Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
- 5 Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
- 6 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
- 7 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Հազար դրամ		2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Ծանոթ.		
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	97	463
Ոչ նյութական ակտիվներ		597	688
		694	1,151
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		-	-
Դեբիտորական պարտքեր	5	841	13,531
Դրամական միջոցներ	6	42,245	14,322
		43,086	27,853
Ընդամենը ակտիվներ		43,780	29,004
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կանոնադրական կապիտալ	7	100	100
Կուտակված շահույթ/վնաս		26,785	16,740
		26,885	16,840
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Փոխառություններ		-	-
		-	-
Ընթացիկ պարտավորություններ			
Փոխառություններ	8	1,700	1,700
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	9	10,299	6,905
Շահութահարկի գծով պարտավորություն		4,896	3,559
		16,895	12,164
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		43,780	29,004

Տնօրեն

Աննա Ավետիսյան



Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

«ԱՈՒՂԻՏ ԱՐՄԵԼԻԱ» ՓԲԸ
 ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄՎԼԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ
 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
 2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ

Հազար դրամ	Ծանոթ.	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
Իրացումից հասույթ	10	63,971	47,043
Վաճառքի ինքնարժեք	11	(21,127)	(17,381)
Համախառն շահույթ		42,844	29,662
Այլ եկամուտ		133	400
Վարչական ծախսեր	12	(9,986)	(9,403)
Այլ ծախսեր		-	-
Գործառնական գործունեությունից շահույթ		32,991	20,659
Ֆինանսական եկամուտ		-	-
Շահույթ մինչև հարկերը		32,991	20,659
Շահութահարկի գծով ծախս	13	(6,206)	(3,876)
Տարվա շահույթ		26,785	16,783
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո			
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ		26,785	16,783

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

«ԱՈՒՂԻՏ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ
 ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
 2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2023թ հունվարի 1-ի դրությամբ	100	5,322	5,422
Տարվա վնաս	-	16,783	16,783
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	16,783	16,783
Շահաբաժիններ		(5,365)	(5,365)
2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	100	16,740	16,840
Տարվա շահույթ	-	26,785	26,785
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	26,785	26,785
Շահաբաժիններ		(16,740)	(16,740)
2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	100	26,785	26,885

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

«ԱՈՒՂԻՏ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Տարվա շահույթ	26,785	16,783
Ճշգրտումներ		
Շահութահարկի գծով ծախս	528	454
Մաշվածության ծախս	6,206	3,876
Գործառնական օգուտ նախքան շրջանառու կապիտալի փոփոխություններ	33,519	21,113
Պաշարների փոփոխություն	-	-
Դեբիտորական պարտքերի փոփոխություն	12,690	(5,277)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	3,394	3,031
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	49,603	18,867
Վճարված շահութահարկ	(4,869)	(1,519)
Գործառնական գործունեության համար օգտագործված գուտ դրամական միջոցներ	44,734	17,348
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(71)	(667)
Ներդրումային գործունեությունից ստացված գուտ դրամական միջոցներ	(71)	(667)
<i>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Շահաբաժիններ	(16,740)	(5,365)
Փոխառություններից մուտքեր	-	-
Ֆինանսական գործունեությունից ստացված գուտ դրամական միջոցներ	(16,740)	(5,365)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ աճ	27,923	11,316
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	14,322	3,006
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	42,245	14,322

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

1. Ընդհանուր տեղեկատվություն

«Աուդիտ Արմենիա» ՓԲԸ-ն (այսուհետ Ընկերություն) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2009թ. դեկտեմբերի 26-ին «Աուդիտ Սրվորթ Արմենիա» անվանմամբ: 2016թ. դեկտեմբերի 14-ին Ընկերությունը վերանվանվել է «Աուդիտ Սրվորթ» ՓԲԸ, իսկ 2021թ. հուլիսի 16-ին՝ «Աուդիտ Արմենիա» ՓԲԸ:

Ընկերության հիմնական գործունեությունը աուդիտորական և խորհրդատվական ծառայությունների մատուցումն է:

Ընկերությունը ՀՀ ֆինանսների նախարարությունից աուդիտորական ծառայությունների լիցենզիա է ստացել 2010թ. մարտի 11-ին: 2021թ. սեպտեմբերի 24-ին գրանցվել է Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի ռեեստրում՝ Պալատի խորհրդի թիվ 57-Ա որոշմամբ: Ռեեստրի հիմնական գրանցման գրառման համարն է՝ 1 21 0631:

Ընկերության բաժնետերերն է որակավորված աուդիտոր Աննա Ավետիսյանը:

2024թ. Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 8 մարդ (2023թ.՝ 7 մարդ):

Ընկերության հասցեն է՝ 0012, Հայաստանի Հանրապետություն, Արաբկիր, Ք. Երևան, Վաղարշյան 12:

2. Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրած հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են ստորև: Դրանք կիրառվել են ներկայացված ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Ընկերության գործառնական արժույթը:

Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Փոքր և Միջին Կազմակերպությունների (այսուհետ՝ ՓՄԿ-ների ՖՀՄՍ) պահանջներին համապատասխան:

Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են չափման սկզբնական արժեքի հիման վրա:

Անընդհատության սկզբունք

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա:

Դատողությունների, գնահատումների և ենթադրությունների օգտագործում

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն պատրաստելու համար Ընկերության ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև պայմանական պարտավորությունների և ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Ֆինանսական հաձվետվությունների կազմը

Ֆինանսական հաձվետվություններում ներառված են՝

ա) ֆինանսական վիճակի մասին հաձվետվություն՝ ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են առանձին դասակարգմամբ:

բ) ֆինանսական արդյունքի մասին մեկ հաձվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Ընկերությունը ներկայացնում է շահույթում կամ վնասում ճանաչված ծախսերի բաժանումը (վերլուծումը)՝ օգտագործելով դրանց գործառնության վրա հիմնված դասակարգումը:

գ) սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաձվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար:

դ) դրամական հոսքերի մասին հաձվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքերի մասին տեղեկատվությունը ներկայացվում է՝ օգտագործելով անուղղակի մեթոդը: Վճարված տոկոսները դասակարգվում են որպես գործառնական, ստացված տոկոսներն ու շահաբաժինները՝ որպես ներդրումային գործունեությունից առաջացող դրամական հոսքեր: Վճարված հարկերը դասակարգվում են որպես գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքեր:

ե) ծանոթագրություններ, որոնք բաղկացած են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագրից և այլ բացատրական տեղեկատվությունից:

Ֆինանսական հաձվետվություններում բացահայտվում է ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաձվետվություններում ներկայացված բոլոր գումարների՝ նախորդ ժամանակաշրջանի (նախորդ տարի) համադրելի տեղեկատվությունը: Երբ Ընկերությունը իր ֆինանսական հաձվետվություններում փոփոխում է հոդվածների ներկայացումը կամ դասակարգումը, ապա վերադասակարգում է համադրելի գումարները, բացի այն դեպքերից, երբ վերադասակարգումն անիրագործելի է:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաձվետվություններ պատրաստելիս Կազմակերպության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի ("ՀՀ ԿԲ") կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքը:

Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն գործարքի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով: Այն ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքները:

	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱՄՆ դոլար	396.56	404.79
Եվրո	413.89	447.90

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների միավորը, որը համապատասխանում է ակտիվի ճանաչմանը, չափվում է սկզբնական արժեքով, որը ճանաչման ամսաթվի դրությամբ անհապաղ վճարման գնի համարժեքն է:

Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ:

Հիմնական միջոցների օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցները սկզբնական ճանաչումից հետո հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Հիմնական միջոցների՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Համակարգչային տեխնիկա
Այլ հիմնական միջոցներ

- 1 տարի,
- 1 տարի:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվներ են լիցենզիաները և թույլտվությունները, որոնք ներկայացվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները: Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Եթե առկա է որևէ հայտանիշ, որ տեղի են ունեցել ամորտիզացիայի հաշվարկման դրույքաչափերի, ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության կամ մնացորդային արժեքի նշանակալի փոփոխություններ, ապա ամորտիզացիան վերանայվում է առաջընթաց կերպով՝ նոր ակնկալիքներն արտացոլելու նպատակով:

Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Այլ ոչ նյութական ակտիվներ

- 10 տարի:

3.4 Վարձակալություն

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն բոլոր այն դեպքերում, երբ վարձակալության պայմաններով վարձակալված ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերը և հատույցները փոխանցվում են Հնկերությանը: Բոլոր այլ վարձակալությունները դասակարգվում են որպես գործառնական վարձակալություն:

Ֆինանսական վարձակալությամբ պահվող ակտիվների նկատմամբ իրավունքները վարձակալության սկզբի դրությամբ ճանաչվում են որպես Ընկերության ակտիվներ՝ վարձակալված գույքի իրական արժեքով (կամ նվազագույն վարձավճարների ներկա արժեքով, եթե այն ավելի ցածր է): Վարձատուի համապատասխան պարտավորությունը ներառվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ որպես ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն:

Վարձավճարները բաշխվում են ֆինանսական վճարների և վարձակալության պարտականության նվազեցման միջև այնպես, որպեսզի ստացվի հաստատուն դրույք՝ յուրաքանչյուր ժամանակաշրջանի պարտավորության մնացորդի նկատմամբ: Ֆինանսական վճարները հանվում են շահույթը կամ վնասը չափելիս: Ֆինանսական վարձակալությամբ պահվող ակտիվները ներառվում են հիմնական միջոցներում և մաշեցվում են ու արժեզրկումից կորստի գծով գնահատվում են այնպես, ինչպես սեփականության իրավունքով պահվող ակտիվները:

Գործառնական վարձակալության գծով վճարման ենթակա վարձավճարները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքներում՝ գծային հիմունքով, համապատասխան վարձակալության ժամկետի ընթացքում:

3.5 Հասույթ

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Ծառայությունների մատուցումից հասույթը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա:

Ընկերության հասույթը հիմնականում առաջանում է աուդիտորական ծառայությունների մատուցումից:

3.6 Հատուցումներ աշխատակիցներին

Աշխատակիցների հատուցումները աշխատակիցների, ներառյալ տնօրենները և կառավարչական անձնակազմը, մատուցած ծառայության դիմաց Ընկերության կողմից ցանկացած ձևով տրվող փոխհատուցումներն են: Աշխատակիցների հատուցումներն են.

ա) աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են (բացի ազատման նպաստներից), որոնք ամբողջությամբ մարվում են այն ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցում են համապատասխան ծառայությունը.

բ) հետաշխատանքային հատուցումներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են (բացի ազատման նպաստներից), որոնք ենթակա են վճարման աշխատանքային գործունեությունն ավարտելուց հետո.

գ) աշխատակիցների այլ երկարաժամկետ հատուցումներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են (բացի հետաշխատանքային հատուցումներից և ազատման նպաստներից), որոնք ոչ ամբողջությամբ են մարվում այն ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցում են համապատասխան ծառայությունը.

դ) ազատման նպաստներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են, որոնք ենթակա են վճարման որպես հետևանք կամ՝

- ընկերության որոշման՝ աշխատանքից ազատել աշխատակիցներին մինչև թոշակի անցնելու ընդունված ժամկետը, կամ
- աշխատակցի որոշման՝ աշխատակիցների թվաքանակի կրճատման դեպքում կամավոր ազատվել՝ փոխարենը ստանալով այդ նպաստները:

3.7 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները լրանում են, կամ երբ ֆինանսական ակտիվները և բոլոր նշանակալից ռիսկերը և հատուցումները փոխանցվում են:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, ենթակա չեն վճարման, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնց իրական արժեքի փոփոխությունները վերագրվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությանը, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

Ֆինանսական ակտիվներ

I. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները և բանկային հաշիվների մնացորդները:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, փոխառությունները:

3.6 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ, ըստ էության գործող հարկային դրույքաչափերով:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Այլ տեղեկատվության բացակայության դեպքում Ընկերությունը կիրառում է 18% դրույք՝ հարկվող ժամանակավոր տարբերությունների և օգտագործվող նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերությունների նկատմամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն գեղջվում (դիսկոնտավորվում):

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Ընկերությունը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում վերականգնվում է այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը:

Ընթացիկ և հետաձգված հարկերը պետք է ճանաչվեն որպես եկամուտ կամ ծախս և ներառվեն տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ հարկի այն մասի, որոնք վերաբերում են այն հոդվածներին, որոնք, նույն կամ տարբեր ժամանակաշրջանում, ճանաչված են՝

ա) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ պետք է ճանաչվեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

բ) ուղղակիորեն սեփական կապիտալում՝ պետք է ճանաչվեն ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընկերությունը շահույթ կամ վնասի, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և սեփական կապիտալի հոդվածները ներկայացնում է՝ հանելով համապատասխան հարկային հետևանքները:

Ընկերությունը ընթացիկ հարկային ակտիվները և ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և՛
բ) մտադիր է՝ կամ հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) զուտ հիմունքով,
կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:
Ընկերությունը հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը
հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝
ա) ունի իրավաբանորեն ամրագրված իրավունք հաշվանցելու հետաձգված հարկային ակտիվները
հարկային պարտավորությունների դիմաց, և՛
բ) հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են
շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից՝
-նույն հարկատուից (հարկվող միավորից), կամ՝
-տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և
ակտիվները զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվները և մարել պարտավորությունները միաժամանակ՝
յուրաքանչյուր ապագա ժամանակաշրջանում, որի ընթացքում ակնկալվում է հետաձգված հարկային
պարտավորությունների և ակտիվների զգալի գումարների մարում կամ փոխհատուցում

4. Հիմնական միջոցներ

հազար դրամ	Համակարգչային տեխնիկա	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>			
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	1,232	70	1,302
Ավելացում	667	-	667
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,899	70	1,969
Ավելացում	-	72	72
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,899	142	2,041
<i>Կուտակված մաշվածություն</i>			
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	1,113	29	1,142
Տարվա ծախս	364	-	364
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,477	29	1,506
Տարվա ծախս	325	113	438
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,802	142	1,944
<i>Հաշվեկշռային արժեք</i>			
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	422	41	463
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	97	-	97

5. Դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	-	40
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	700	126
Տրված կանխավճարներ շահաբաժինների գծով	-	13,256
Դեբիտորական պարտքեր աշխատավարձի գծով	141	109
	841	13,531

6. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամարկղ	42,245	14,322
Բանկային հաշիվներ (դրամային)	-	-
Բանկային հաշիվներ (արտարժույթային)	-	-
	42,245	14,322

7. Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը բաղկացած է 100 հատ 1,000 դրամ անվանական արժեքով սովորական բաժնետոմսերից:

8. Փոխառություններ

Փոխառությունները ստացված են երրորդ կողմից անտոկոս, ՀՀ դրամով, չապահովված: Ենթակա են մարման փոխատուի կողմից պահանջ ներկայացնելուց մեկ տարվա ընթացքում և արտացոլված են չգեղջված՝ անվանական արժեքով:

9. Կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	117	104
Կրեդիտորական պարտքեր վարձակալությունների գծով	-	2,250
Ստացված կանխավճարներ	5,400	3,000
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	1,408	1,551
Աշխատավարձի գծով պարտք	-	-
Այլ կրեդիտորական պարտքեր	3,374	-
	10,299	6,905

10. Հասույթ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Առևտրական ծառայությունների մատուցումից հասույթ	61,471	47,043
Այլ ծառայությունների մատուցումից հասույթ	2,500	-
	63,971	47,043

11. Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատակիցների հատուցումներ	16,383	12,656
Մաշվածություն և ամորտիզացիա	431	358
Վարձակալության ծախսեր	4,313	4,367
	21,127	17,381

12. Վարչական ծախսեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատակիցների հատուցումներ	1,601	1,514
Մաշվածություն և ամորտիզացիա	97	97
Գործուղման ծախսեր	1,200	1,992
Վարձակալության ծախսեր	3,000	3,333
Բանկային ծախսեր	169	136
Խորհրդատվական և հաշվապահական ծախսեր	840	640
Զփոխհատուցվող հարկերից ծախսեր	600	600
Այլ ծախսեր	2,479	1,091
	9,986	9,403

13. Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	6,206	3,876
Հետաձգված հարկ	-	-
	6,206	3,876

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	32,991		20,659	
Շահութահարկ 18% (2023թ. 18 տոկոս)	5,938	18.00	3,719	18.00
Զնվազեցվող ծախսեր	268	0.81	157	0.76
Շահութահարկի գծով ծախս	6,206	18.81	3,876	18.76

14. Ֆինանսական գործիքներ

14.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.6-ում:

14.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Դեբիտորական պարտքեր</i>		
Առևտրային դեբիտորական պարտքեր	-	40
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	42,245	14,322
	42,245	14,362

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Ստացված փոխառություններ	1,700	1,700
Առևտրային կրեդիտորական պարտքեր	117	2,354
	1,817	4,054

15. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ընկերությունը իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական (որը ներառում է արտարժույթային), պարտքային և իրացվելիության ռիսկերի:

15.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ընկերության գործունեությունն ուղղակիորեն ենթարկվում է, տոկոսադրույքային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը և կապիտալի գնային ռիսկին (տես՝ բ) ստորև):

բ) Արտարժույթային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Ընկերությունը 2022թ.գործարքները իրականացրել է հայկական դրամով:

գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը ֆինանսական կորուստներ կարող է կրել:

Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

դ) Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

16. Իրական արժեք

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

17. Պայմանական պարտավորություններ

17.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Ընկերության ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

17.2 Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկա փուլում ապահովագրության շատ տեսակներ զարգացման սկզբնական փուլում են և լայնորեն չեն կիրառվում: Սա է պատճառը, որ Ընկերությունն ապահովագրված չէ գործունեության ընդհատման, ակտիվների կորստի կամ այլ անձանց կողմից պարտավորությունների չկատարման հետևանքով վնասներ կրելու իրադարձություններից: Քանի դեռ Ընկերությունն ապահովագրված չէ համապատասխան ռիսկերից, առկա է ակտիվների կորստի կամ ոչնչացման վտանգ, ինչը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ նրա գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Բացառություն են կազմում սեփականատերերի կողմից ավտոմեքենաների պարտադիր ապահովագրությունները, որոնք հատուցում են վթարի դեպքում երկրորդ կողմին պատճառված վնասները:

17.3 Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ պահանջում է մեկնաբանություններ: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են վերանայման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

18. Գործարքներ կապակցված կողմերի միջև

18.1 Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է բաժնետիրոջ կողմից:

Հազար դրամ	Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31- դրությամբ	2024թ.	Մնացորդը 2023թ. դեկտեմբերի 31- դրությամբ
Շահաբաժիններ	-	(13,256)	13,256
	-	(13,256)	13,256

Հազար դրամ	Մնացորդը 2023թ. դեկտեմբերի 31- դրությամբ	2023թ.	Մնացորդը 2022թ. դեկտեմբերի 31- դրությամբ
Տրված կանխավճարներ շահաբաժինների գծով	13,256	5,203	-
	13,256	5,203	-
			8,053

18.2 Առանցքային կառավարչական անձնակազմին փոխհատուցումներ

Առանցքային կառավարչական անձնակազմը ներառում է այն անձանց, ովքեր իրավասու են և պատասխանատվություն են կրում Ընկերության գործունեության պլանավորման, կառավարման և վերահսկողության իրականացման համար: Ընկերության կառավարչական անձնակազմը տնօրենն է:

Հազար դրամ	2024թ.	2023թ.
Ղեկավարությանը հատուցումներ	4,889	4,203